

ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Հարց.- Ինչո՞ւ են խաչակնքում ամեն ժամանակ եւ ի՞նչ է նշանակում խաչակնքելը:

Պատասխան.- Արարողութիւնների ժամանակ, եկեղեցի մտնելիս, խնկարկութեան եւ պատարագչի խաչանիշ օրհնութեան ժամանակ, որպէս կանոն խաչակնքում են: Խաչակնքում են հետեւեալ ձեւով. ասում են «յանուն Հօր (աջ ձեռքի երեք մատները միասին տանում դէպի նակատը), եւ Որդւոյ (ձեռքը իջեցնում են ներքեւ) «եւ Հոգւոյն (ձեռքը տանում են դէպի ձախ կողմը), Ամէն» (ձեռքը քացած մատներով դնում են սրտի վրայ): Այդպէս են խաչակնքում նաեւ Հռոմէական (Կաթոլիկ) եկեղեցում: Խաչակնքելը նշանակում է.

- Վահան ընդդէմ սատանայական ներգործութիւնների:

- Յիշում ենք մեր Տէր Յիսուս Քրիստոսի փրկարար Մահը Խաչի վրայ՝ մարդկութեան ազատագրման համար:

- Խնդրում ենք Աստծու օգնութիւնը եւ ողորմութիւնը:

- Խորհրդաւորաբար մենք մեռած ենք համարում մեզ աշխարհի չար գորութիւնների համար (խաչում ենք) եւ կենդանի՝ Յիսուսի համար:

- Չարն այլեւս գորութիւն չունի, քանի որ Յիսուս խաչուեց մեզ համար եւ Խաչի վրայ թափած արիւնով մենք փրկուեցինք. խաչակնքուելով մենք հաստատում ենք մեզ Խաչի տակ, ուր մեռաւ մեր Տէրը: Այսինքն՝ մենք ուր էլ գնանք, ինչ էլ անենք, մեր տեղն այնտեղ է, ուր խաչուեց Յիսուսը, այսինքն՝ Գողգոթան:

- Ցանկանում ենք, որ այսուհետեւ մեր վրայ տպուի, արտապատկերուի Յիսուսը՝ այն էլ Խաչը ելած (Տե՛ս Ա. Կորնթ., Բ. 2):

- Ցանկանում ենք, որ այսուհետեւ

մեզ նայելիս տեսնեն միայն Խաչեալ Յիսուսին:

Երբ ձեռքը տանում ենք դէպի վեր՝ ուզում ենք ասել, որ մեր միտքը, էութիւնը գամուեց Խաչի վրայ, եւ թող այսուհետեւ Քրիստոսի միտքը գրաւի մեզ:

- Երբ ձեռքը տանում ենք դէպի ներքեւ՝ ուզում ենք ասել, որ այլեւս մեր մարմինը չէ, որ պիտի թելադրի մեզ՝ նա մեռաւ Խաչի վրայ, այլ թող Քրիստոս թելադրի մեզ՝ նա մեռաւ Խաչի վրայ, այլ թող Քրիստոս թելադրի իր կամքը մեզ, ինչպէս ասում է «Հայր Մեր»-ում. «Քո կամքը լինի»:

- Ձախ եւ աջ տանելով՝ ուզում ենք ասել, որ ձեռքերը դարձեալ խաչուեցին Խաչի վրայ, որոնք չար գործելու համար արդէն անպիտան են, եւ հիմա պիտի միայն քարին գործեն:

- Ձեռքը քացուած տանելով դէպի սիրտը եւ ասելով «Ամէն», հաստատում ենք եւ համաձայնում այդ ամենին («Ամէն» - նշանակում է «նիշտ է», «ես համաձայն եմ»): Այս առումով շատ գեղեցիկ շարական է գրել Շնորհալին (Տե՛ս նրա «Տարածեալը»):

- Մեղքն առաջ եկաւ եղեմական պարտէզում այսպէս (Տե՛ս Ծննդոց, գլուխ Գ). Ադամը տեսաւ կնոջ արածը (միտքը), որը ցանկացել էր արգելուած պտուղին ((մարմինը), վերցրել էր ու կերել (ձեռքերը): Խաչակնքուելիս խորհրդաւորաբար վերապրում ենք այդ ամէնը, նոյնը չկրկնելու ձգտումով: Խաչին է գամում մեր էութիւնը (երբ ձեռքը տանում ենք դէպի վեր), մարմինը (երբ ձեռքն իջեցնում ենք ներքեւ), ձեռքերը եւ սիրտը: Այսինքն՝ խաչակնքուելը նշանակում է մեր հին էութեան դատապարտում, եւ նոր էութեան ծնունդ, կամ Հին մարդու վերջ, եւ նոր մարդու

սկիզբ:

Նախնի եկեղեցում (Առաքելական շրջանում) տարածուած էր մի շատ ծանօթ երգ (հիմն), որն ամբողջութեամբ պահպանուած է Պօղոսի մօտ (Նփես., Ե 14)։

«Արթնացի՛ր, դու որ քնած ես եւ կանգնի՛ր մեռելներից ու Քրիստոս քնի լոյս կտայ»։

Քնածն այստեղ Ադամն է, որ մեռաւ։ Աւանդութիւնը Քրիստոսի խաչուելու տեղը (Գողգոթայում) նշանակում է Ադամի գերեզմանի հետ։ Դրա համար էլ հնում խաչի տակ նկարում էին գանկ (Ադամի)։ Այսպիսով խաչակնքուելիս մենք փաստում ենք, որ մեռանք որպէս Ադամ եւ կանգնեցինք՝ որպէս Քրիստոս։

Մի դիտողութիւն եւս. հայերէնում բառն ինքնին ճիշտ է արտայայտում իմաստը՝ խաչ եւ կնքել, խաչի կնքիչը դնել մեզ վրայ, այն է աւետարանական ամբողջ նշմարութեամբ կնքուել։

Եւ վերջապէս, ձեւի մասին. խաչ հանելիս երեք մատներն միացնում ենք իրար, որը խորհրդանշում է Ս. Ներսիսիւնը, անբաժան եւ միասնական։ Միւս երկու մատները (նկոյթն ու մատանեմատը) միասին սեղմում ենք ափին, որը խորհրդանշում է Քրիստոսի մէջ երկու բնութեան անբաժանելի միութիւնը, Քրիստոս որպէս Մարդ եւ Աստուած, եւ այդ երկուսը որպէս մէկ (մատները սեղմուած են իրար)։

Հարց.— Ի՞նչ է տնօրհնէլը։

Պատասխան.— Սովորութիւնը սկիզբ է առնում Առաքելական դարից, երբ առաքելները եւ հոգեւորականները շրջում էին տները եւ աւետում Յիսուսի Մնունդն ու Յարութիւնը։ Այս սովորութեան համաձայն էլ քահանաները շրջում են տները՝ քարոզելով եւ Աւետարան ընթերցելով։

Հարց.— Ի՞նչ է աղօրհնէլը եւ Մատաղը։

Պատասխան.— Ըստ Շմորհալու, այս

կարգը մտցրել է Լուսաւորիչ Հայրապետը, որը մեզ յիշեցնում է Առաքելական շրջանի սիրոյ ճաշերը (Թուղթ Ընդհանրական, 1871, էջ 261-264)։ Ամէն կերակուր Աստուծոյ անէծքի համաձայն (Մննդոց Գլ. 3)։ անմաքուր է։ Ուստի ուտելուց առաջ պէտք է աղօթք անել՝ որ մաքուրի, անէծքը վերանայ։ Իսկ եթէ ուզում ենք կերակրել ուրիշներին՝ աղատներին, ապա օրհնել ենք տալիս աղը, որն այնուհետեւ ուտեցնելով անասունին՝ մաքրում է նրան, եւ մորթելով քաժանում է աղատներին։ Որոշ տեղեր մատաղացու ոչխարի մսից հարիսա են եփում եւ յաջորդ օրը, Պատարագից յետոյ, օրհնելով՝ քաժանում են երկաներին։ Մայր Մաշտոցում նկարագրուած է մատաղի օրհնութեան կարգը, ուր ընթերցում է Ղուկասի Աւետարանից (Գլուխ ԺԴ 12-14)։

«Երբ ճաշ կամ ընթրիք ես անում, մի կանչիր քարեկամներիդ, եղբայրներիդ, ազգականներիդ եւ ոչ էլ հարուստ ծանօթներիդ ... այլ կանչիր աղատներին եւ խեղանդամներին, կոյրերին ու կաղերին եւ երանելի կը լինես»։

Հարց.— Ինչո՞ւ են մոմերը վառած տանում տուն։

Պատասխան.— Քրիստոս որպէս աշխարհի լոյս՝ եւ վառած մոմերը՝ դրա խորհուրդը։ Տունը, ընտանիքը այդ լոյսով լուսաւորելու ձգտումով էլ մոմերը վառած են տանում տուն, որպէս զի եկեղեցում ստացած օրհնութիւններով օրհնուի նաեւ մեր տունը։

Հարց.— Մի՞թէ դա կապ ունի հեթանոսական կրակի պաշտամունքի հետ։

Պատասխան.— Յիսուսի քառասունօրեայ ընծայումը ոչ մի կապ չունի կրակապաշտ սովորութեան հետ։ Առաւել, մեր նախնիները այնպէս են արել, որ հեթանոս այդ սովորութիւնը վերանայ։ Ինչպէս գիտենք, հեթանոսական այդ տունը կապուած է արեւի եւ կրակի պաշտամունքի հետ։

եկեղեցին արգելում է կրակավառութիւնը այդ իմաստով. «Խոսելի է շրջելն գիրով» – թելադրում է Տօնացոյցը: Ճանաչելով Կենդանի Արեգակին եւ Կենդանի Կրակին (Լոյսին) մեր ընծայումը պիտի ուղղեմք դէպի Քրիստոս, այլ ոչ թէ նիւթական ինչ-ինչ քաների:

Հարց.– Իսկ ինչո՞ւ են կրակ վառում եկեղեցիների բակում:

Պատասխան.– Մեր հին եւ նոր կեանքն են ցոյց տալիս: Մի ժամանակ ծառայում էինք նիւթին (կրակը), որն ամէն ինչ այրում եւ ոչնչացնում է՝ աննպատակ ու անիմաստ: Ինչքան այդպիսի գործեր ենք արել ու ժամանակ վատել: Դա մարդու կեանքն է առանց Քրիստոսի: Եւ հիմա (մարդու կեանքը Քրիստոսի հետ) ծառայում ենք իսկական, Կենդանի Կրակին, Լոյսին: Խորհուրդը հետեւեալն է. մենք պիտի հիմա ընտրենք, թէ ում ենք ծառայելու՝ նիւթին, թէ՛ Արարչին, եղծանելի կրակին, թէ՛ Կենդանի Կրակին. ահա նա՝ Կենդանի Կրակը, այսօր Տաճար քերուեց, քառասնօրեայ, որպէս զի յաիտեմակամութեան դռները բացուեն, որոնք փակուել էին մեղքի պատճառով:

Մեզանում առկայ են նաեւ այնպիսի սովորութիւններ, որոնք չունեն որեւէ հիմնաւորում, եւ օրեցօր աւելի են տարածում ու հիմնաւորում մեր մէջ: Այսպէս, օրինակ, Դվինի 5րդ ժողովի (719 թ.) 5րդ կէտը թելադրում է, որ Զատիկից առաջ՝ Մեծ պահոց շրջանում եւ Զատիկից յետոյ՝ մինչեւ Հոգեգալուստ պսակ չկատարուի: Քանի որ Զատիկը լինում է Մարտի 21ի եւ Ապրիլի 26ի ընթացքում, ուրեմն Հոգեգալուստն էլ կը լինի Մայիսի 10ի եւ Յունիսի 15ի ընթացքում: Հետեւաբար, եթէ Հոգեգալուստը լինի մայիսի 10ին, պսակի արգելքն վերացուած կը լինի Մայիսի 10ից յետոյ: Ուրեմն, անգամ ժողովական այս կանոնի համաձայն Մայիսի մէջ

թոյլատրելի է պսակի կատարումը, մինչդեռ մեզանում արմատաւորուած է այն կարծիքը, որ Մայիսն պսակ չի կարելի անել ընդհանրապէս, որն, ինչ խօսք, այդպէս չէ:

Վերջին ժամանակներում մեր մէջ արմատաւորում են նաեւ այնպիսի ոչ բարեպաշտական սովորութիւններ, որոնք ոչ միայն կանոնացուած չեն եկեղեցու կողմից, այլեւ անիմաստ են ու դատապարտելի: Ցաւալին այն է, որ այդ տիպի, սնոտի, տգէտ սովորութիւնները ներկայացւում են որպէս «բարեպաշտական սովորութիւն»: Այդպիսի «սովորութիւններով» մենք յաճախ «լրացնում» ենք յուղարկաւորութեան արարողութիւնը: Մի քանի օրինակ.

– Թաղման ժամանակ, դագաղը տնից դուրս հանելիս նրանով երեք անգամ հարածում են սեղանին, սեղանն են շուռ տալիս, իսկ շէնքից դուրս հանելիս՝ երեք անգամ պտտացնում: Այս էլ ինքնահնար, սնոտի եւ անիմաստ ծէս է, որը դատապարտելի է: Հայոց ծիսարանում միայն արարողութեան մասին ոչ մի ակնարկ չկայ:

– Հանգուցեալի դագաղի ետեւից թարմ ծաղիկներ են շաղ տալիս: Եթէ շատ թէ քիչ յարգում են հանգուցեալի յիշատակը, պէտք է անմիջապէս հրաժարուել այս տգէտ սովորութիւնից:

Ս. ՄԱՅԻԼՅԱՆ

(«Ոսկեփորիկի Ա. Մաս, Կրօնական Գիտելիքների Հանրագիտարան, Երեւան, 1993)